



## ՈՒՂԵՑՈՒՅՑ

«ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ



«ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ մշակվել է էներգախնայողության աջակցման հիմնադրամի կողմից «ՔՀԿ-երը հանուն կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացման» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով փրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում: «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «ՔՀԿ-երը հանուն կայուն և թափանցիկ էներգետիկայի» կոալիցիան, և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

# ՆԱԽԱԲԱՆ

## 1. Ուղեցույցի անհրաժեշտությունը

**i** «Պետական գնումների մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ է մտել 2017թ. ապրիլի 25-ին: Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այսինքն կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ, ինչպես նաև գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Օրենքի կիրարկման ընթացքում պատվիրատու հանդիսացող կազմակերպությունների կողմից հաճախ օրենքի նպատակը (տնտեսող, արդյունավետ և օգտավետ) մեկնաբանվում է որպես ամենացածրարժեք ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ձեռքբերում, որի դեպքում թե՛ մասնագրերն ու մրցութային պահանջներն են սահմանվում ցածրարժեք ապրանքներին համապատասխան, և թե՛ մրցութային առաջարկներից ընտրվում են ամենացածր գնաառաջարկով տարբերակները: Արդյունքում ձեռք բերված կամ ստեղծված արժեքները իրականում մեծամասամբ ավելի թանկ են ստացվում՝ հաշվի առնելով դրանց շահագործման և պահպանման համար անհրաժեշտ ծախսերը, որոնք ևս վճարվում են պետական (համայնքային) բյուջեից:

Այնինչ, գործող օրենքը սահմանում է մի շարք մոտեցումներ, որոնք հնարավորություն են տալիս ձեռք բերել *հատուցման դիմաց արժեք*: Օրինակ, ոչ-գնային չափորոշիչների սահմանում, միջազգային ստանդարտների կիրառում, կյանքի ցիկլի հիման վրա գնաառաջարկի կիրառում և այլն:

Բացի «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներից, այլ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով ևս սահմանվում են յուրահատուկ պահանջներ, որոնք պարտադիր են հանրային միջոցների հաշվին գնումների դեպքում: Մասնավորապես դա վերաբերում է շինարարական աշխատանքների (կառուցում, վերակառուցում, նորոգում) էներգաարդյունավետության նորմերի և ստանդարտների պարտադիր պահանջներին, ինչպես նաև ապրանքների ձեռքբերման դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված էներգաարդյունավետության պիտակավորման կիրառմամբ տեխնիկական բնութագրերի սահմանմանը մրցութային փաստաթղթերում:

Սույն ուղեցույցի նպատակն է օժանդակել պատվիրատու հանդիսացող կազմակերպություններին կիրառելու ՀՀ օրենսդրության՝ էներգաարդյունավետության

առնչվող պահանջները և կիրառել «Գնումների մասին» ՀՀ օրենքով տրված հնարավորությունները՝ գնման գործընթացի արդյունքում առավելագույն ֆինանսական արդյունավետություն ապահովելու համար:

## 2. Ուղեցույցի շրջանակները

**i** Սույն ուղեցույցը սահմանափակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի տարածման տիրույթով: Ուղեցույցը անդրադառնում է ապրանքների, ծառայությունների (նախագծում, վերահսկում), աշխատանքների ձեռքբերման գործընթացներում էներգաարդյունավետության կիրառման գործնական հարցերին:

Սույն ուղեցույցը նպատակ ունի գործնական աջակցություն ցուցաբերել պատվիրատու կազմակերպություններին՝ իրականացնել գնումները օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան և առաջնորդվելով արդյունավետության և օգտավետության նպատակներով: Ուղեցույցը անդրադառնում է ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման ամբողջ գործընթացի ընթացքում էներգաարդյունավետության պահանջների սահմանման, համապատասխանության, հավաստման գործընթացներին:

## 3. Օրենսդրական պահանջներ

**i** Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է էներգախնայողության և էներգաարդյունավետության խթանման և խրախուսման քաղաքականություն՝ որպես երկրի էներգետիկ անվտանգության երաշխիք: Այդ քաղաքականության իրականացման համար ընդունվել են մի շարք օրենսդրական ակտեր, որոնք ապահովում են տնտեսության տարբեր ոլորտներում էներգաարդյունավետության միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ պայմաններ:

Էներգաարդյունավետության ոլորտը կարգավորող օրենսդրությունը ներառում է ՀՀ օրենքներ, ՀՀ կառավարության որոշումներ, սահմանված կարգով հաստատված տեխնիկական կանոնակարգեր, ազգային ստանդարտներ, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումներ: Հավելված 1-ում ներկայացված են հիմնական օրենսդրական և ենթօրենսդրական ակտերի ցանկը: Օրենսդրական ակտերին կարելի է ծանոթանալ [www.arlis.am](http://www.arlis.am) կայքէջում:

Հատկանշական է, որ էներգաարդյունավետության ամենամեծ ներուժը գտնվում է շենքերում, հետևաբար օրենսդրական կարգավորման մեջ նշանակալի դերակատարում

ունեն քաղաքաշինական փաստաթղթերը: Հիմնական ստանդարտների ցանկը ներկայացված է Հավելված 2-ում:

#### 4. Հաստատություններ

**i** *Սույն ուղեցույցը կարող է օգտագործել արդյունավետ գնումների իրականացմամբ շահագրգիռ ցանկացած կազմակերպություն: Այնուամենայնիվ, առաջնային օգտագործողները այն կազմակերպություններն են, որոնք ֆինանսավորվում են պետական կամ համայնքային բյուջեներից:*

Էներգաարդյունավետության պարտադիր պահանջներ են կիրառվում պետական և համայնքային բյուջեներից ֆինանսավորվող գնումների դեպքում: Այսինքն, այն հաստատությունները, որոնց գնումները ֆինանսավորվում են այլ աղբյուրներից կարող են օգտվել սույն ուղեցույցից իրենց հայեցողությամբ՝ ապահովելու համար իրենց կառույցներում երկարաժամկետ ֆինանսական արդյունավետություն: Հարկ է նշել, որ նոր կառուցվող շենքերի դեպքում էներգաարդյունավետության նորմերի կիրառումը պարտադիր է՝ անկախ ֆինանսավորման աղբյուրից և սեփականության ձևից:

#### 5. Ազդեցություն շուկայի վրա

**i** *Հայաստանում պետական գնումների գործընթացը ուղղակի ազդեցություն ունի մատակարարման շուկայի և շուկայի մասնակիցների վրա:*

Հայաստանում իրականացվող պետական գնումները նշանակալի ազդեցություն ունեն մատակարարման շուկայի ձևավորման վրա: Կախված նրանից, թե ինչ բնութագրերով ապրանքներ են ձեռքբերվում պետության կողմից, մատակարարները նախընտրում են այդպիսի ապրանքների ներմուծումը կամ արտադրությունն առհասարակ գնորդների ավելի լայն շրջանակի համար: Նույնը վերաբերում է շինարարության ընթացքում օգտագործվող շինանյութերին, սարքավորումներին և տեխնոլոգիաներին: Կարելի է նույն պնդումն անել նաև ծառայությունների դեպքում, մասնավորապես նախագծային աշխատանքների տեխնիկական առաջադրանքներով պայմանավորված՝ նույնատիպ նախագծեր են արվում նաև ոչ-պետական պատվերների դեպքում:

Հաշվի առնելով, որ էներգաարդյունավետության պահանջները ենթադրում են ավելի արդյունավետ, ապահով, երկարատև շահագործման համար նախատեսված պահանջներ, կարելի է եզրակացնել, որ շուկայի արձագանքը նման պահանջներին կլինի

համարժեք: Օրինակ, եթե պետական գնումների շրջանակներում ձեռքբերվող լամպերը լինեն լուսադիոդային, որ ապահովում են առավելագույն արդյունավետություն, ապա լամպերի մատակարար կազմակերպությունների վաճառքի գերակշիռ մասը կկազմեն հենց այդպիսի լամպերը:

Հատկանշական է նաև պետության որպես օրինակ ծառայելու դերակատարումը՝ էներգաարդյունավետության խրախուսման առումով:

## 6. Գործընթացները

**i** Ուղեցույցն անդրադառնում է գնումների գործընթացի բոլոր փուլերին՝ գործնական խորհուրդներ ապահովելով պատվիրատու կազմակերպությունների համար:

Գնումների գործընթացի բոլոր փուլերում՝ գնումների պլանավորման, գնման առարկայի բնութագրերի հաստատման, գնումների նախնական հսկողության, պայմանագրերի կատարման, կառավարման և ֆինանսավորման, կարևոր է ապահովել էներգաարդյունավետության պահանջների կատարումը: Սույն ուղեցույցը նկարագրում է այդ փուլերի ընթացքում անհրաժեշտ գործողությունները, որոնք պետք է նախատեսվեն և իրականացվեն պատասխանատու կառույցների և անձանց կողմից:

## 7. Հսկողություն և վերահսկողություն

**i** Ինչպես պետական և համայնքային բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող ցանկացած գնման դեպքում օրենսդրությամբ սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում նաև դրանց շրջանակներում էներգաարդյունավետության պահանջների կատարման նկատմամբ:

Սույն ուղեցույցը նկարագրում է նաև էներգաարդյունավետության պարտադիր և առաջարկվող միջոցառումների նախատեսման և իրականացման նկատմամբ իրավասու մարմինների կողմից հսկողության և վերահսկողության գործընթացը: Այն ներառում է ինչպես պատվիրատուի կողմից անհրաժեշտ հսկողության ապահովումը, այնպես էլ պետական համապատասխան կառույցների իրավասությունների շրջանակը:

## ԲԱԺԻՆ 1. ԳԼՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

**i** Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվանագույնը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվափոփոխական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր փոփոխական պայմանների վրա:

«Գնումների մասին» ՀՀ օրենք, Հոդված 13.3

«Գնումների մասին» ՀՀ օրենքը հստակորեն սահմանում է գնման առարկայի բնութագրերի սահմանման պահանջները: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ օրենքը, ելնելով արդյունավետության և որակի նկատմամբ պատշաճ վերաբերմունքի անհրաժեշտությունից, հնարավորություն է տալիս կիրառել ոչ միայն ազգային, այլև միջազգային ստանդարտներ: Հաշվի առնելով ժամանակակից տեխնոլոգիաների արագ տարածումը, օրենքը հնարավորություն է տալիս կիրառել ժամանակավոր տեխնիկական պայմաններ, եթե տվյալ տեխնոլոգիաների ստանդարտները դեռևս չեն գործում:

Ապրանքների ձեռքբերման ժամանակ առաջարկվում է առաջնորդվել ՀՀ օրենսդրությամբ, ԵԱՏՄ և ԵՄ պայմանագրերով սահմանված պիտակավորման բնութագրերից:

**i** Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կադրողականի կամ գործառության (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

«Գնումների մասին» ՀՀ օրենք, Հոդված 13.3

Օրենքի այս դրույթը խիստ կարևոր է էներգաարդյունավետության կիրառման տեսանկյունից: Մասնավորապես, այն հնարավորություն է տալիս սահմանել որպես գնման առարկա ոչ թե որոշակի ապրանք կամ աշխատանք, այլ կոնկրետ ֆունկցիոնալ արդյունք: Օրինակ, գնման առարկա կարող է հանդիսանալ ոչ թե ջեռուցման համար նախատեսված կաթսան, այլ գազի ծախսի կրճատումը սարքավորումների արդիականացման միջոցով: Այս դեպքում գնման առարկայի բնութագրերը ներառում են ոչ թե կաթսայի տեխնիկական բնութագրերը (հզորություն, ՕԳԳ, չափսեր), այլ գազի խնայողության տոկոսը կամ ծավալը: Իսկ մատակարար կազմակերպությանը վճարվում է ապրանքի դիմաց, եթե պահանջվող խնայողության տոկոսն ապահովվում է:

Նույն տրամաբանությունը կիրառվում է նաև աշխատանքների դեպքում: Եթե շինարարական աշխատանքների ավանդական պայմանագիրը պարունակում է ծավալաթերթ և գնառաջարկը ներկայացվում է միավոր գների համապատասխան, ապա էներգաարդյունավետ գնումների դեպքում կարող են տրամադրվել հատկանշական էներգասպառման և շենքի վերաբերյալ տվյալներ, սահմանել նվազագույն էներգաարդյունավետության (կամ խնայողության) մակարդակ, որի համար կներկայացվեն գնառաջարկներ:

## ԲԱԺԻՆ 1. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՈՒՄ

**i** Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պեդական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության պարտադիր տեխնիկական պահանջները պետք է պահպանեն նախագծողները, կառուցապատողները և շահագործման ընդունողները: Էներգախնայողության և էներգաարդյունավետության պարտադիր տեխնիկական պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

*«Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենք,*

*Հոդված 5.3*

Ակնհայտ է, որ նոր կառուցվող շենքերում հնարավոր է ապահովել առավելագույն էներգաարդյունավետություն, եթե ի սկզբանե, նախագծման փուլում կիրառվեն արդյունավետ լուծումներ: Դրա արդյունքում այդպիսի բնակարաններում ապրող



ընտանիքները ավելի քիչ էներգիա կսպառեն ջեռուցման, հովացման և լուսավորության համար, քան ավանդական շենքերի դեպքում: Այդ է պատճառը, որ պետությունը պարտադրում է նոր կառուցվող շենքերի համար կիրառել էներգաարդյունավետության տեխնոլոգիաներ՝ համաձայն համապատասխան կանոնակարգերի և ստանդարտների, նույնիսկ եթե այդ շենքերը կառուցվում են մասնավոր հատվածի ներդրումներով:

Գոյություն ունեցող շենքերի վերակառուցման կամ նորոգման դեպքում կան որոշակի սահմանափակումներ, որոնք թույլ չեն տալիս կիրառել լավագույն տեխնոլոգիաները, սակայն այս դեպքերում ևս հնարավոր է ապահովել աշխատանքների արդյունքում էներգասպառման էական կրճատում: Օրենքի պահանջ է կիրառել այդպիսի տեխնոլոգիաներ պետական միջոցների հաշվին կառուցվող, վերակառուցվող և նորոգվող շենքերի նկատմամբ: Դա կարգավորվում է նաև «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին» ՀՀ կառավարության 25.12.2015թ. թիվ 1504-Ն որոշմամբ, «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 12.04.2018թ. թիվ 426-Ն որոշմամբ, մի շարք ստանդարտներով, որոնց ցանկը բերված է Հավելված 2-ում:

Այս կանոնակարգմամբ պարտադիր է դառնում շինարարական աշխատանքների գնումների դեպքում էներգաարդյունավետության մոտեցումների կիրառումը: Այդ գործընթացը սկսվում է շենքերի նախնական գնահատման, նախագծա-նախահաշվային աշխատանքների կատարման համար ծառայությունների տեխնիկական առաջադրանքի մշակման փուլերով, ապա անցնում բուն նախագծման գործընթաց և մրցութային փաթեթների պատրաստում, հետագայում պայմանագրերում դրանք ներառելով, և վերջապես դրանց օրենսդրությամբ սահմանված կարգով ընդունելով: Ստորև նկարագրված են այդ փուլերի առանձնահատկությունները:

- Շենքի կառուցման, վերակառուցման կամ նորոգման որոշում կայացնելիս անհրաժեշտ է այլ պարամետրերի հետ միաժամանակ որոշել, թե որքան էներգիա է շենքը ծախսում հովացման, ջեռուցման, լուսավորության համար: Լավագույն մոտեցումն է դա իրականացնել էներգետիկ փորձաքննության ծառայությունների միջոցով: Սակայն եթե դա հնարավոր չէ որոշակի պատճառներով, ապա այն պետք է նախատեսվի և իրականացվի նախագծող կազմակերպության կողմից, որի հետ

կնքվող պայմանագրում նման տեխնիկական առաջադրանք պետք է սահմանվի: Ելնելով գնահատված կամ փաստացի էներգիայի ծախսից, նախագծողի (փորձաքննողի կամ էներգետիկ աուդիտորի) կողմից պետք է առաջարկվեն վերոնշյալ տեխնիկական կանոնակարգով և համապատասխան ստանդարտներով սահմանված էներգախնայողության միջոցառումներ նախատեսել, նախագծել և պատվիրատուին ներկայացնել սահմանված կարգով:

- Նախագծային աշխատանքների ձեռքբերման մրցութային փաստաթղթերում անհրաժեշտ է ներառել էներգետիկ փորձաքննության, էներգաարդյունավետության միջոցառումների նախատեսման, նախագծման, նախահաշվների կազմման պահանջներ: Համապատասխան առաջադրանքը պետք է ներառվի նախագծողի հետ կնքվող պայմանագրում:
- Շինարարական աշխատանքների (կառուցում, վերակառուցում, նորոգում) գնման գործընթացում անհրաժեշտ է կիրառել էներգաարդյունավետության պահանջներ: Թեպետ շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն նախագծի համաձայն, հետևաբար նախագծով նախատեսված տեխնոլոգիաները և սարքավորումները պարտադրաբար պետք է կիրառվեն կապալառու կազմակերպության կողմից, այնուամենայնիվ, անհրաժեշտ է հիշել, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքը հնարավորություն է տալիս օգտագործել արդյունավետության ոչ-դրամական ցուցանիշներ, մասնավորապես մրցութային փուլում կարող է սահմանվել աշխատանքների արդյունքում ակնկալվող էներգախնայողությունը (գազի սպառման կրճատում, խոր.մ կամ էլեկտրաէներգիայի սպառման կրճատում, կՎտժ կամ տոկոսային արտահայտությամբ): Օրենքը նաև հնարավորություն է տալիս կիրառել «կատարողականի» պայմանագիր, որի դեպքում կապալառուին կատարված աշխատանքների դիմաց գումարը վճարվում է որոշակի ցուցանիշների կատարման դեպքում: Նման ցուցանիշներից մեկը կարող է լինել էներգախնայողությունը կամ կրճատված էներգասպառումը: Պայմանագրով նախատեսվող գումարը կամ դրա մի մասը կարող է վճարվել միայն անհրաժեշտ խնայողության մակարդակը ապահովելու դեպքում, նույնիսկ եթե բոլոր աշխատանքները կատարվել են:
- Օրենսդրությամբ սահմանված կարգով նախագծային փաստաթղթերը և շինարարական աշխատանքների արդյունքն ընդունելիս անհրաժեշտ է նաև ստուգել կատարված աշխատանքների համապատասխանությունը էներգաարդյունավետության վերաբերյալ օրենսդրական պահանջներին:
- Տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման տեխնիկական առաջադրանքը կազմելիս անհրաժեշտ է ընդգծել էներգաարդյունավետության

միջոցառումների նկատմամբ համապատասխան հսկողության անհրաժեշտությունը: Էներգասարդյունավետ սարքավորումների և նյութերի տեղակայման դեպքում անհրաժեշտ է նախատեսել տեխնիկական հսկողության կողմից դրանց համար սերտիֆիկատների պահանջ և դրանց համապատասխանության ստուգում:

- Տեխնիկական հսկողության կողմից պետք է նաև ստուգվի աշխատանքների ավարտից հետո էներգասպառման կրճատման ցուցանիշները: Դա պետք է նախատեսվի համապատասխան մրցութային փաստաթղթերում և կնքվող պայմանագրում:

## ԲԱԺԻՆ 2. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆՈՒՄ

**i** Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

*«Գնումների մասին» ՀՀ օրենք, Հոդված 13.1*

Ապրանքների գնման դեպքում անգնահատելի է հստակ և մանրամասն տեխնիկական բնութագրերի նշանակությունը որակյալ, նպատակային, արդյունավետ արդյունք ստանալու համար:

Ապրանքների տեխնիկական բնութագրերը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել արդյունավետությունը, որը հանդիսանում է ՀՀ գնումների համակարգի կարևորագույն պահանջներից մեկը: Հաճախ արդյունավետությունը ասոցացվում է նվազագույն գնի հետ, սակայն իրականում դա լավագույն տարբերակի համար առաջարկվող նվազագույն գինն է:

Պարզագույն օրինակ կարող է հանդիսանալ կենցաղային լամպի գնումը: Շուկայական գները ուսումնասիրելիս նույն սենյակը լուսավորելու համար լամպի գինը կարող է տատանվել տաս անգամ: Մի դեպքում, գնման համար կսահմանվեն այնպիսի տեխնիկական բնութագրեր, որոնք համապատասխանում են ամենացածր գին ունեցող լամպին: Այս դեպքում կհիմնավորվի, որ գնումն արդյունավետ է, քանի որ ամենացածր գինն է վճարվում: Մյուս դեպքում, նույն սենյակը լուսավորելու նպատակով լամպի տեխնիկական բնութագրեր ընտրելիս բացի գինը հաշվի են առնվում նաև այլ

պարամետրեր, մասնավորապես, որքան էլեկտրաէներգիա է սպառում լամպը, ինչ հաճախականությամբ պետք է այն փոխարինել նորով: Այս երկու տեսակի լամպերը միայն ձեռքբերման գնով գնահատելու դեպքում առավելություն կտրվի առաջինին, սակայն եթե դիտարկվեն բոլոր պարամետրերը պետական միջոցների արդյունավետ օգտագործման տեսանկյունից, ապա նախընտրելի կդառնա երկրորդը, թեպետ ավելի բարձր գնով, որը սակայն գնման ժամանակ ձեռք կբերվի տվյալ տեսակի և տվյալ բնութագրերի համար առաջարկվող նվազագույն գնով:

Վերոնշյալ օրինակը կարելի է կիրառել գրեթե բոլոր ապրանքների դեպքում, սկսած ավտոմեքենաներից, համակարգչային տեխնիկայից մինչև օդորակիչներ, կաթսաներ և այլ ապրանքներ, որ ձեռք են բերվում պետական միջոցների հաշվին:

Գնումների գործընթացը սկսվում է կարիքների գնահատման և պլանավորման փուլից: Այս փուլում է անհրաժեշտ կիրառել գնման ենթակա ապրանքի «իրական» գնի որոշում, այսինքն անհրաժեշտ է վերլուծել ոչ միայն ձեռքբերման պահին դրա գինը, այլև ապրանքի կյանքի տևողությունը, դրա շահագործման և պահպանման ծախսերը, դրա ուտիլիզացիայի համար կատարվող լրացուցիչ ծախսերը, այսինքն կյանքի ցիկլի մեթոդով գնահատել և որոշել, թե ինչպիսի տեխնիկական բնութագրերով ապրանքն է առավել արդյունավետ պետական ֆինանսների օգտագործման տեսանկյունից:

Այս գործընթացին օժանդակում է ապրանքների էներգաարդյունավետության պիտակավորումը, որի համաձայն ապրանքները դասակարգվում են ըստ էներգատարության կարգի: Գնման ժամանակ պիտակով կարող է որոշվել և համեմատվել էներգասպառումը տվյալ սարքի շահագործման դեպքում: Կարելի է կամավորական հիմունքներով կիրառել Եվրոպական Միության պիտակավորման տեղեկատվությունը, եթե ՀՀ համապատասխան օրենսդրությամբ դրանք դեռևս հաստատված չեն:

Հայաստանում այդպիսի պիտակավորման կարգեր ընդունվել են հինգ տեսակի ապրանքախմբերի համար. սառնարան, օդորակիչ, գազի կաթսա, սալօջախ, լվացքի մեքենա: Այդ գործընթացը շարունակվում է՝ ընդգրկելով նաև ԵԱՏՄ համապատասխան կանոնակարգերով դրանց սահմանումը:

## ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐ

1. «Գնումների մասին» ՀՀ օրենք
2. «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենք
3. «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին» ՀՀ կառավարության 25.12.2015թ. թիվ 1504-Ն որոշում:
4. «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 12.04.2018թ. թիվ 426-Ն որոշում:
5. «2017-2018թթ ՀՀ էներգախնայողության գործողությունների ծրագրի երկրորդ փուլին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2.02.2017թ. թիվ 4 արձանագրային որոշում:

## ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀՀ ՎԷ և ԷԱ ՈԼՈՐՏԻ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՑԱՆԿ

|     |                        |   |
|-----|------------------------|---|
| 1.  | ՀՍ 330-2010            | Ոչ ավանդական տեխնոլոգիաներ. Կենսաթափոնների էներգետիկա. Տերմիններ և սահմանումներ   |
| 2.  | ՀՍ 335-2011            | Արևային էներգետիկա. Արևային լուսաէլեկտրական կայանքների (մինչև 5 ՄՎտ հզորության) միացումը էլեկտրաէներգետիկական համակարգի ընդհանուր նշանակության էլեկտրական ցանցին. Ընդհանուր դրույթներ |
| 3.  | ՀՍ 345-2012            | Վերականգնվող էներգետիկա. Հողմաէներգետիկա. Հողմատուրբինների միացումը էլեկտրաէներգետիկական համակարգի ընդհանուր նշանակության էլեկտրական ցանցին. Ընդհանուր դրույթներ                      |
| 4.  | ՀՍ 362-2013            | Էներգախնայողություն. Շենքի էներգետիկ անձնագիր. Հիմնական դրույթներ.Տիպային ձև  |
| 5.  | ՀՍ 371-2016            | Բնակելի և հասարակական շենքերում էներգետիկ աուդիտի իրականացման մեթոդաբանություն  |
| 6.  | ՀՍ ԳՕՍ Ռ ԻՍՕ 3741-2013 | Ձայնագիտություն. Ըստ ձայնային ճնշման ձայնային հզորության և ձայնային էներգիայի աղմուկի աղբյուրի մակարդակների որոշում. Ճշգրիտ մեթոդներ հետարձագանքման խուցերի համար                     |
| 7.  | ՀՍ ԵՆ 15217-2012       | Շենքի էներգետիկական բնութագիր. Շենքերի էներգետիկական բնութագրի արտահայտման ու էներգաարդյունավետության սերտիֆիկացման մեթոդներ  |
| 8.  | ՀՍ ԻՍՕ 13790-2014      | «Շենքերի էներգետիկ բնութագրեր. Ջեռուցման և հովացման էներգիայի ծախսի հաշվարկ»  |
| 9.  | ՀՍ ԵՆ 15241-2015       | Շենքերի օդափոխում. Առևտրային շենքերում օդափոխմամբ և ներթափանցմամբ պայմանավորված էներգակորուստների հաշվարկման մեթոդներ   |
| 10. | ՀՍ ԵՆ 15242-2014       | «Շենքերի օդափոխություն. Շենքերում օդի հոսքի հաշվարկման մեթոդներ, ներառյալ ներթափանցումը»  |

|     |                       |   |
|-----|-----------------------|---|
| 11. | ՀԱՍ ԵՆ 15316-1-2012   | Ջերմամատակարարման համակարգեր շենքերում. Համակարգի էներգիային պահանջարկի ու արդյունավետության հաշվարկման մեթոդ. Մաս 1. Ընդհանուր դրույթներ                                       |
| 12. | ՀԱՍ ԵՆ 15316-3-3-2015 | Ջեռուցման համակարգեր շենքերում-համակարգի էներգիայի պահանջների և համակարգի արդյունավետության հաշվարկման մեթոդ. Մաս 3-3. Կենցաղային տաք ջրամատակարարման համակարգեր, արտադրություն |
| 13. | ՀԱՍ ԵՆ 15603-2012     | Շենքերի էներգետիկական բնութագիր. էներգիայի ընդհանուր օգտագործում և էներգաարդյունավետության վարկանիշների որոշում   |
| 14. | ՀԱՍ ԻԷԿ 61400-21-2011 | Հողմատուրբիններ. Մաս 21. Հողմատուրբիններին միացված էներգետիկական ցանցի էլեկտրաէներգիայի որակական բնութագրերի չափում և գնահատում   |
| 15. | ՀԱՍ ԻՍՕ 9251-         | 2014 «Ջերմամեկուսացում, ջերմափոխանցման պայմաններ և նյութերի հատկություններ. Բառարան»  |
| 16. | ՀԱՍ ԻՍՕ 10211-2014    | «Ջերմային կամրջակները շենքի կոնստրուկցիաներում. Ջերմային հոսքեր և մակերևույթի ջերմաստիճաններ». Մանրամասն հաշվարկներ»  |
| 17. | ՀԱՍ ԻՍՕ 13153-2014    | Մեկ ընտանիքի համար նախատեսված և փոքր առևտրային շինությունների էներգախնայողության նախագծման գործընթացի հիմունքներ  |
| 18. | ՀԱՍ ԻՍՕ 13789-2014    | «Շենքերի ջերմային բնութագրեր. Ջերմահաղորդականության և օդափոխման ջերմափոխանցման գործակիցներ». Հաշվարկման մեթոդներ»   |
| 19. | ՀԱՍ ԻՍՕ 13790-2014    | Շենքերի էներգետիկ բնութագրեր. Ջեռուցման և հովացման էներգիայի ծախսի հաշվարկ  |
| 20. | ՀԱՍ ԻՍՕ 14683-2014    | «Ջերմային կամրջակները շենքի կոնստրուկցիաներում. Գծային ջերմանցիկություն. Պարզեցված մեթոդներ և ստանդարտ արժեքներ»  |

|     |                             |   |
|-----|-----------------------------|---|
| 21. | ՀԱՍ ԻՍՕ<br>14438-2009       | Շինարարական ապակիներ. Էներգիական հաշվեկշռի արժեքի որոշում. Հաշվարկման մեթոդ   |
| 22. | ՀԱՍ ԻՍՕ<br>15316-3-2-2015   | Ջեռուցման համակարգեր շենքերում. Համակարգի էներգիայի պահանջների և համակարգի արդյունավետության հաշվարկման մեթոդ. Մաս 3-2. Կենցաղային տաք ջրամատակարարման համակարգեր, բաշխում                                      |
| 23. | ՀԱՍ ԻՍՕ<br>16818-2012       | Շենքի միջավայրի նախագծում. Էներգաարդյունավետություն. Տերմինաբանություն  |
| 24. | ՀԱՍ ԻՍՕ<br>23045-2012       | Շենքի միջավայրի նախագծում. Նոր շենքերի էներգաարդյունավետության գնահատման ուղեցույց  |
| 25. | ՀԱՍ ԻՍՕ<br>50001-2012       | Էներգետիկայի կառավարման համակարգեր. Պահանջներ և կիրառման ուղեցույց  |
| 26. | ՀԱՍ ԻՍՕ<br>9050-2009        | Շինարարական ապակիներ. Լույսի, արևի ուղիղ ճառագայթների թողանցման, արեգակնային էներգիայի լրիվ թողանցման, անդրամանուշակագույն ճառագայթների թողանցման գործակիցների և ապակեպատվածքի համապատասխան բնութագրերի որոշում |
| 27. | ՀԱՍ ԻՍՕ<br>15265-2016       | Շենքերի էներգետիկ բնութագիր. Սենքերի ջեռուցման և հովացման համար էներգիայի ծախսի հաշվարկ դինամիկական մեթոդների կիրառմամբ. Ընդհանուր չափորոշիչներ և գնահատման ընթացակարգեր  |
| 28. | ՀԱՍ ԻՍՕ/ԻԷԿ<br>13273-1-2016 | Էներգաարդյունավետություն և վերականգնվող էներգիայի աղբյուրներ. Ընդհանուր միջազգային տերմինաբանություն. Մաս 1. Էներգաարդյունավետություն   |
| 29. | ՀԱՍ ԻՍՕ/ԻԷԿ<br>13273-2-2016 | Էներգաարդյունավետություն և վերականգնվող էներգիայի աղբյուրներ. Ընդհանուր միջազգային տերմինաբանություն. Մաս 2. Վերականգնվող էներգիայի աղբյուրներ  |



## ՀԱՎԵԼՎԱԾ 3.

### ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԻՐԱՌԵԼԻ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

#### 1.0 Շենքի պատող կոնստրուկցիա

##### 1.1 Տանիքից/առաստաղից էներգիայի կորուստների կրճատում

1.11 Տանիքի/առաստաղի լրացուցիչ ջերմամեկուսացում

1.13 Տանիքի ծածկում բաց գույնի նյութերով

##### 1.2 Պատերից և հատակից էներգիայի կորուստների կրճատում

1.21 Պատերի լրացուցիչ ջերմամեկուսացում

1.22 Հատակի լրացուցիչ ջերմամեկուսացում

1.23 Արտաքին պատերը ծածկել բաց գույնի նյութերով

1.24 Պասիվ արևային շենքի լուծումներ

##### 1.3 Պատուհաններից և դռներից ջերմային կորուստների կրճատում

1.31 Պատուհանների փոխարինում

1.32 Լրացուցիչ ապակեշերտի տեղադրում

1.33 Հատուկ շերտի կամ գազերի կիրառում (արգոն գազ ապակիների արանքում, հատուկ շերտի կիրառում)

1.34 Շարժական մեկուսացում (Ստվերող կոնստրուկցիաներ, շերտավարագույրներ)

##### 1.4 Պատուհաններից և դռներից տաքության կրճատում

1.41 Արտաքին ստվերող կոնստրուկցիաների տեղակայում

1.42 Ներքին ստվերող կոնստրուկցիաների տեղակայում

1.43 Անդրադարձող մակերեսի կամ գունավոր թաղանթների կիրառում

1.44 Պատուհանների չափսերի և տեղադրման դիրքի օպտիմիզացիա

##### 1.5 Օդային ներթափանցման կրճատում

- 1.51 Պատուհանների և դռների քփացում ռետինե կամ այլ նյութերով
- 1.52 Օդային վարագույրի տեղակայում
- 1.53 Պտտվող դռների կիրառում
- 1.54 Փակ տարածքով մուտքի (տամբուռ) կիրառում

## **2.0 Լուսավորություն**

### **2.1 Կրճատել պահանջվող լուսավորությունը**

- 2.11 Կիրառել տեղային լուսավորություն
- 2.12 Լուսավորության կարգավորում (մարդու ներկայության ցուցիչ, ծրագրավորված ժամային կարգավորում, էներգետիկ կառավարման համակարգ)
- 2.13 Օգտագործել բաց գույներով պատի ներկեր/ծածկույթ

### **2.2 Տեղադրել ավելի էներգաարդյունավետ լուսավորության համակարգ**

- 2.21 Օգտագործել բարձր արդյունավետության լուսատուներ, արդյունավետ լուսավորությամբ ցուցանակներ, լուսադիոդային լամպեր
- 2.22 Օգտագործել արտաքին լուսավորության արդյունավետ սարքեր
- 2.23 Լուսադիոդային լամպեր

### **2.3 Օգտագործել բնական լույս**

- 2.31 Փոփոխվող լուսավորության կարգավորման հնարավորություն (Dimming Controls)
- 2.32 Ճարտարապետական լուծումներ ի կիրառում

## **3.0 Ջեռուցման, հովացման, օդափոխության (HVAC) ավտոմատ համակարգ**

### **3.1 Օդափոխության համակարգ**

- 3.11 Կրճատել էներգիայի կորուստը՝ ավելացնելով խողովակների մեկուսացումը, տեղակայելով օդ-օդ ջերմության ռեկուպերատորներ
- 3.12 Կրճատել համակարգի հոսքերը

Կրճատել օդի հոսքի և հովհարների արագությունը

Փոփոխվող արագության համակարգեր հովհարների էներգասպառման կրճատման համար

3.14 Կրճատել հովհարների բեռնվածքը

Կրճատել արագությունը նվազագույնի հասցնելով

Տեղակայել տեղային հովհարներ

### **3.2 Ջրաբաշխման համակարգ**

3.21 Կրճատել էներգետիկ կորուստները

Ջրի խողովակների մեկուսացում

Հոսակորուստների մոնիտորինգ

3.22 Կրճատել հսքի արագությունը

Առաջնային/երկրորդային պոմպերի փոխարինում փոփոխական արագության շարժիչներով

Շրջանառու պոմպերի վրա ժամանակային կարգավորիչների տեղադրում

### **3.3 Ջեռուցում**

3.31 Բարելավել կաթսային և այրիչի արդյունավետությունը

Համապատասխանեցնել կաթսայի չափը պահանջարկին

Տեղակայել մի քանի կաթսա

Տեղակայել կոնդենսացիոն կաթսաներ

Կաթսայի ջրի քիմիական մշակում

3.32 Կիրառել բարձր արդյունավետության ջերմային պոմպեր

Օդ-օդ ջերմային պոմպեր

Ջուր-աղբյուր ջերմային պոմպ

Հող-աղբյուր ջերմային պոմպ

3.33 Տեղակայել ճառագայթային ջեռուցման համակարգ

### **3.4 Հովացում**

3.41 Ընտրել առավել արդյունավետ հովացման համակարգ

3.42 Բարելավել հովացման արդյունավետությունը

Կիրառել ջերմաստիճանի վերահսկման համակարգեր

3.43 Բարձրացնել կոնդենսացման արդյունավետությունը

3.44 Բարելավել մասնակի բեռնվածքի աշխատանքը

## **4.0 Ջրատաքացում**

### **4.1 Կրճատել ջրատաքացման պահանարկը**

4.11 Օգտագործել ցածր ջրի պահանջարկով սարքեր

4.12 Ժամանակային ցուցիչների կիրառում

4.13 Ջերմաստիճանային ցուցիչների կիրառում

### **4.2 Կրճատել համակարգի կորուստները**

4.21 Տաք ջրի խողովակների մեկուսացում

4.22 Տաք ջրի բաքերի ջերմամեկուսացում

### **4.3 Տեղակայել առավել էներգաարդյունավետ ջրատաքացման համակարգ**

4.31 Օգտագործել ջերմային պոմպեր

4.32 Տեղակայել արևային ջրատաքացուցիչներ

## **5.0 Էլեկտրական համակարգեր**

### **5.1 Կրճատել էլեկտրաէներգետիկ համակարգի կորուստները**

5.11 Հոսանքի ճիշտ պարամետրեր

5.12 Էներգաարդյունավետ տրանսֆորմատորների տեղակայում

### **5.2 Էներգաարդյունավետ շարժիչների տեղակայում**

5.21 Բարձր արդյունավետությամբ շարժիչներ

5.22 Բազմաստիճան շարժիչներ

5.23 Փոփոխական արագության շարժիչներ

5.24 Շարժիչների չափսի օպտիմիզացիա

### **5.3 Կրճատել պիկային էներգիայի պահանջարկը**

5.31 Պահանջարկի սահմանափակման կարգավորիչներ

## **6.0 Սառեցման համակարգեր**

### **6.1 Բարելավել կարգավորումը**

6.11 Ապասառեցման ցիկլի վերահսկում

6.12 Բարելավել կոնդենսացնող միավորի հսկումը

### **6.2 Կրճատել սառեցման համակարգի կորուստները**

6.21 Սառեցվող տարածքի անջատում դռներով կամ վարագույրներով

6.22 Սառեցվող համակարգի ջերմամեկուսացում

### **6.3 Բարելավել սառեցնել համակարգի արդյունավետությունը**

6.31 Բազմակի կոմպրեսորների և ցուցիչների տեղակայում

6.32 Մեծացնել կոնդենսացնող միավորի արդյունավետությունը

6.33 Ընտրել բարձր արդյունավետության կոմպրեսոր

## **7.0 Այլ**

### **7.1 Կիրառել առավել արդյունավետ համակարգեր**

7.11 Վերելակների և շարժասանդուղքների օպտիմիզացիա

7.22 Ջրավազանների ծածկերի օգտագործում